

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

• ԱՊԵՔՏՈՎԱՆԴՐԻԱ Հ.



Տպր. Զ. Պետրեանի

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսօր, Աւրբար, 1916 Օգոստոս 18, սուրագրեալիք անգամներ Աղեխանգրիոյ Հայ Գաղութին, կազմեցին «Հայ Արքախնամ Ընկերութիւն» մը, նպատակ ունենալով՝ մայրենի երկրին մեջ շարդի ու սովի արհաւիրքներեն նողոպրած հայ որբերուն անմիջական նպաս հասցնել հետագայ կանոնագրին տամադրութիւններուն համաձայն:

## ՅՈՒՆԱՆԵՍ ԱՐՏԱՐԵԱՆ

## ԿԱՐԱՊԵՏ ԱՆԼԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ՄՈՒԴԱԼԵԱՆ

ԹՈՎԱՆ ԹՕՓՈՒԶԵԱՆ

## ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՒՏՍՈՒԹԵԱՆ

Աղեֆասնորհու


18 Qnusnu 1916



Կ Ա Տ Ա Տ Ա Տ Ա Տ Բ Բ

## ՀԱՅ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ա Դ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի Ա



ՅՕԴ. 1. — Հայ Որբախնամ Ընկերութեանս նպասկն է՝ ջարդին ու սովին արհաւիրքներէն նողոպրած հայ որբերուն անմիջական նպաստ հասցնել, ըլլայ Հայաստանի, ըլլայ Կիլիկիոյ մեջ :

ՅՕԴ. 2. — Աղեքանդրիոյ Հայ Որբախնամ Ընկերութիւնը կրնայ յարաբերութիւն մշակել Գահիրէի Միացեալ Որբախնամ Ընկ. հետ, պարբերական բղրակցութեամբ, խորհուրդներու փոխանակութեամբ եւ տարին գոնե մեկ անգամ պատուիրակային ժողով մը գումարելով։ Երկու ժոյր հաստատութիւններ կրնան նոյն իսկ գործակցիլ՝ երբ մանաւանդ ըղձալի առիքը ներկայանայ յանուն Եղիպահայ գաղութին միասնաբար Հայ Որբանոց մը հիմնելու հայրենի հողին վրայ։

ՅՕԴ. 3. — Հայ Որբախնամ Ընկերութիւնն ունի երկու մարմին. — Ընդհանուր Ժողով եւ Վարչական Ժողով։

ՅՕԴ. 4. — Ընդհանուր Ժողովը կը կազմեն երկսեռ անդամներ, որոնք ամիսը առնուազն երկու դամեկան ողջ եգ. բաժնեգին կը վճարեն։

ԾԱՆՈԹ. — Ընկերուիիները ընտրող միայն կրնան ըլլալ, իսկ օսարսզգի անդամներ ոչ ընտրող եւ ոչ ալ

ընտելի կրնան ըլլալ :

ՅՕԴ. 5. — Ընդհանուր Ժողովի մէջ ձայն ունին անոնք միայն՝ որոնք իրենց բաժնեգինը կանոնաւորապէս եւ ամբողջովին վճարած են, իսկ նորագիրները եռամսեայ անդամակցութենք ու վճարումք յետոյ միայն կրնան ձայն ունենալ:

ՅՕԴ. 6. — Ընդհանուր Ժողովին պարտականութիւններն են՝

Ա. Ընտել Վարչական Ժողովը,

Բ. Ընդունիլ անոր Տարեկան Տեղեկագիրն ու հաստատել հաշիւները,

Գ. Վերաբննել կանոնագիրը:

ՅՕԴ. 7.— Ընդհանուր Ժողովը կ'ունենայ իր Դիւանը, որուն հրաւիրագրովն ու լրագրական ծանուցումովը Տեղի կ'ունենան Տարեկան նիստերը: — Նիստերը օրինաւոր կը նկատուին՝ երբ Երկսեռ անդամներուն կէսէն մէկ աւելի ներկաներ գտնուին:

ԾԱՆՈԹ. — Ա. Եթէ առաջին եւ Երկրորդ հրաւերով մեծամասնութիւն չգոյանայ՝ Երրորդ հրաւեր (ու ծանուցում) մը եւս կ'ըլլայ, որ ատեն նիստը օրինաւոր կը նահցցուի՝ եթէ առնուազն «10» անդամներ ներկայ գտնուին անձամբ:

Բ. Արուումները կը ՏՐՈՒԻՆ մեծամասնութեան ձայնով միայն:

Գ. Ընտրութիւնները կը կատարուին գաղտնի ժաւեռվ:

Դ. Ընդհանուր Ժողովի դիւանին պահօնը կը ՏԵԼ Երկու Տարի եւ անդամները վերընտելի են:

ՅՕՒ. 8. — Վարչական Ժողովը կը բաղկանայ նինգ անդամներէ, եւ կ'ունենայ իր Ասենապետը, Փոխ-Ասենապետը, Ասենադպիրը, Գանձապետը եւ Խորհրդականներ:

ԾԱՆՈԹ. — Անհրաժեշտ դասուած պարագային միայն՝ Վարչական Ժողովը կը նշանակի երկու խորհրդականներ՝ ընտրութեանց միջոցին առաւելագոյն բուե շահողներէն, որոնք միւս անդամներուն նետ հաւասար իրաւունքներ կ'ունենան եւ որոնց ընտրութիւնը պատօնազբարով մը կը ծանուցանէ Ընդհ. Ժողովոյ դիւանին: Նոյնը ՏԵՂԻ կ'ունենայ նաեւ անդամներու հրաժարումի պարագային :

Հիմնադիր Վարչական Ժողովը եւս ի պահանջել հաւեկին կրնայ իր թիւը 7 ի բարձրացնել՝ իր անդամոց միահաղոյն հաւանութեամբ :

Բ. Վարչական Ժողովը իրաւունք ունի աշխայժ երկաւու հայերէ ընտրելու Օժանդակ Յանձնախումբեր՝ նպաստի գործը բեղմնաւորելու համար, ներկայացումներով, երեկոյթներով, նաևդեսներով, ձեռագործով, պազարով, եւն. եւն. :

ՅՕՒ. 9. — Վարչական Ժողովի պարտականութիւններն են՝

Ա. Կանոնաւոր կերպով գումարել իր նիսերը, ամփալ առ նուազն անգամ մը, միւս մեծամասնութեան ներկայութեամբ,

Բ. Որոշումներն ու մուտքի եւ ելքի հաշիները արձանագրել ընկերութեան տոմարներուն մէջ,

Գ. Ընտրել Օժանդակ Յանձնախումբեր,

Գ. Հակել կանոնագրին գործադրութեան եւ գործին բարգաւանումին վրայ,

Ե. Տարեկան տեղեկագիր եւ հաշուեկեփո մատուցանել Ընդհ. Ժողովին՝ երկու օրինակի վրայ, որոնք Ընդհ. Ժողովին ընդունուելէ յետոյ կը մատուցուին առ ի վաւերացումն Ազգ. Առաջնորդարանին, որուն հսկողութեան ենթարկուած են ընկերութեանս բոլոր հաշուական գործառնութիւնները,

Զ. Բայ այս Ընկերութեանս բոլոր հաշուական եւ ատենագրական տոմարները տեղուոյս Ազգ. Առաջնորդարանին նախապես դրումուած եւ բուագրուած ըլլալու են:

ՑԱՆՈԹ. 10. — Վարչական Ժողովին ուջանն է երկու տարի, անդմները կրնան վերընտրուիլ, իսկ հինգէն երկուեր (եօթը ըլլալու պարագային՝ երեքը) անպայման ընտրուելու են:

ՑԱՆՈԹ. — Սոյն յօդուածը վաւերական է նաև Ընկերութեանս հիմնադիր՝ անդրանիկ Վարչական Ժողովին համար :

ՑԱՆՈԹ. 11. — Հայ Արքախնամ Ընկերութեան հասոյթի աղբիւրներն են՝

Ա. Ընկերներու բաժնեգիններ,

Բ. Կամաւոր կամ տոմսաւոր նուերներ եւ կտակ,

Գ. Վիճակահանութիւն,

Դ. Սինեմա եւ բատերական ներկայացում,

Ե. Գրական եւ գեղարուեստական երեկոյթ, դաւանանդիս,

Զ. Գրեոյիներու հրատարակութիւն եւ վաճառում եւն;

ՅՈՒ. 12. — Ընկերութեանս ամեն կարգի հասոյթները կը գանձուին տպեալ, քուագրեալ եւ բուճաւոր ընկալուգրեռով, որ կը կրեն Վարչական Փողովին Ատենապետին եւ Գանձապետին սուրագրութիւնները եւ Ընկերութեան կնիքը : — Ծախսենք պէսք է ունենան արդարացուցիչ սացականներ :

ՅՈՒ. 13. — Վարչական Փողովը իր հաւաքած նպաստը պարբերաբար եւ անյապաղ Ազգ. Առաջնորդարանի ձեռամբ Վեհ. Կարողիկոսին կը հասցնէ՝ նպատակին յատկացուելու համար :

ԾԱՆՈԹ. — Վարչական Փողովը պարտաւոր է տարին գոնե մեկ, սուառաւելն երկու պարգեւաւոր « Եզիպտական Գրետի-Ֆօնսիկ » ի արժեքուղի գնել եւ Ազգ. Առաջնորդարանի յանձնել ի պահ : Արժեքուղիքերու եւ անոնց հաւանական պարգեւներու գործածումը Ընդհ. Փողովին որոշումին վերապահուած է, միւս նպատակին յատկացւելու հասկացողութեամբ :

ՅՈՒ. 14. — Ընկերութիւնս քէեւ իր պատօնին բնութեամբ մնայուն հանգամանք ունի, սակայն լուծուած կը նկատուի երբ անդամներուն թիւը տասնեն պակաս ըլլայ: Այս պարագային Աղեքսանդրիոյ Հայոց Առաջնորդարանը՝ Ընկերութեան գոյքը հնչուն դրամի վերածելով Վեհափառ Կարողիկոսին ձեռամբ կը յատկացնէ դարձեալ նպատակին :

ԾԱՆՈԹ. — Ընկերութիւնս լուծուելու պարագային Ազգ. Առաջնորդարանը իրաւունք ունի պահանջելու Ընկերութեան տոմարներն ու քուղիքերը եւ բոլոր գոյքերը,

որու մօս որ գտնուին, եւ պահելու զանոնե իր մօս :

Յօն. 15. — Վարչական ժողովը գրական, հաւաքչական եւ այլ աշխատութեանց համար կրնայ ունենալ վճարեալ պաշտօնեայ :

### ՎԵՐԱԲԵՆՈՒԹԻՒՆ

Ներկայ կանոնագիրը, երբ հարկ տեսնուի, կրնայ վերաբենութեան ենթարկուիլ երկու տարի յետոյ, նիմնական նպատակը անփոփոխ պահելու պայմանով : Ո եւ է փոփոխութիւն, յապատռմ կամ յաւելում Ազգ. Առաջնորդարանին կը հաղորդուի ՚ի հաստատութիւն: Մինչեւ այս հաստատութեան պաշտօնագրին ժամանումը հին կանոնագիրը կը պահէ իր ուժը :

18 Օգոստս 1916

Աղեքանդրիա

Անդամնեամբ նիմնադիր անդրանիկ  
Վարչական ժողովոյ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱԲՏԱՐԵԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՆԼԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ՄՈՒԴԱԼԵԱՆ

ԹՈՎՄԱՍ ԹՈՓՈՒԶԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՒՏՍՈՒԶԵԱՆ

Աղեքանդրիոյ «Հայ Որբախնամ Ընկերութեան» սոյն կանոնագիրս Պատ. Քաղաքական ժողովոյ Սպ. 6 ի

նիստին մեջ նկատողութեան առնուած եւ վաւերացուած  
ըլլալով, կ'յանձնենք եւ կ'յանձնարարենք օրինութեամբ ՚ի  
գործադրութիւն :

Առաջնորդ Հայոց Եպիսկոպոս ԳՈՒՇԱԿԵԱՆ  
ԹՈՐԴՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆ  
(ԿՇԽԲ)

(ԿՇԽԲ)

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՇԽՔՍԱՆԴՐԻԱ

